XV

ՎԱՐԴԱՆ ԲԱՂԻՇԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XVII Դ.)

Վարդան Բաղիշեցին XVII դարի երկրորդ կեսի մատենագիր է։ Նա Բաղիշեցի է կոչվել, որովհետև, ինչպես հաղորդում է 1664 թ. չափածո մի հիշատակարան, այնտեղ է ծնվել. «...Վարդան բարուն այն հոգելի, որ էր տեղեաւ Բաղիշեցի...»[1]։

Վարդան Բաղիշեցու գործունեությունն ընդհանրապես արդյունք էր XVII դարի մատենագրական ու կուլտուրական աշխուժացման։ Նախորդ երեք դարերի ընդհանուր ավերածություններին, մտավոր ու հոգևոր կյանքի անկմանը հաջորդած XVII դարի հայ մատենագրության և կուլտուրական այլ երևույթների վերելքի գործում քիչ դեր չխաղաց Բաղեշը, որին Վարդան Բաղիշեցին իր հիշատակարաններից մեկում կոչում է բդեշխաշեն. «Նորոգեալ եղև գիրքս ի յերկիրս Բղնունեաց, ի լայնանիստ քաղաքս Բաղէշ ի բըդէշխաշէն, ի սուրբ մենաստանս Ամիրդոլու»[2]։

Վ. Բաղիշեցու ծննդյան տարեթիվը հայտնի չէ, սակայն Դավիթ Բաղիշեցին սրան 1663 թ. արդեն հիշում է որպես վարդապետ և Ամրդոլու վանքի առաջնորդ[3]։ Վ. Բաղիշեցու ծնողները եղել են Եղիան և Ղարիպը։ Մանկական տարիներից Վարդանը, ինչպես հաղորդում է Դավիթ Բաղիշեցին, իր կրթությունն ստացել է Ամրդոլու վանքում, ժամանակի կրթված և գիտուն մարդկանցից մեկի, նույն վանքի առաջնորդ Խաչատուր վարդապետի մոտ[4]։ Ինքը, Վարդանը, իր հիշատակարաններից մեկում, հետևյալ ջերմ տողերն է թողել վերջինիս մասին. «...Նորոգեալ եղև գիրքս... վերաբուիտողութեան վանացս աեառն իմոյ և հօր հոգևորի և բազմերախտի Խաչատուր հռետորի և բանիբուն իմաստասէր և կորովամիտ գիտնականի և քաջ փիլիսոփայի, որ ի յերեկոյացեալ և ի մթնեալ և ի նսեմ ժամու ծագեցաւ մեզ Հայաստանեացս տառապեալ ազգի իբր զջահ անշէջ և իբր զարեգակն պայծառ, տարածելով զճառագայթս իմաստութեան իւրոյ և զշառաւիղս գիտութեան ընդ ոլորտս տիեզերաց քառորդ կողմանց առնելով և ուսուցանելով...»[5]։

Ժամանակակիցները Վարդանի մասին խոսում են մեծ ակնածությամբ և նրան անվանում «մեծ հռետոր», «քաջ հռետոր և բանիբուն վարդապետ»,

---

1 № 2748, էջ 357բ։
2 ՄՄՄ, № 72, էջ 419։
3 Տես վերևում էջ 362։
4 Տես վերևում, էջ 362։
5 ՄՄՄ № 72, էջ 419։

«կրկին լուսավորիչ», «լոյս աշխարհի», «փադիշահ» և այլն։ Իսկ 1697 թ. հիշատակարանում, գրիչը, Վարդանի աշակերտը, գրում. է «...գրեցաւ... ի առաջնորդութեան սուրբ ուխտիս (Ամրդոլու—Վ. Հ.) մեծ բարունապետիս և քաջ փաղերայիս[1], վարժապետիս մերոյ Վարդան վարդապետին...»[1]։

Թե ինչու են Վարդանի մասին ժամանակակիցները մեծ երախտագիտությամբ ու հարգանքով խոսել, պարզում է հիշատակարաններից մեկը. «...ի ժամանակիս յայսմիկ ոչ ոք է նման նմա (Վ. Բաղիշեցուն—Վ. Հ.), զի է անձանձիր ուսուցանող, շինող և հաստատող սրբոց եկեղեցեաց Հայաստանեայց, զի բաղում եկեղեցիս վերստին շինեալ կանգնեաց և զոչ եղեալսն ի բաղում տեղիս նորոգ հիմնարկեաց և շինեալ աւարտեաց...»[3]։

Թեև Վ. Բաղիշեցուց մեզ հասել է մի ժամանակագրություն, բայց նա աչքի է ընկել ո՛չ այնքան իր մատենագրական գործունեությամբ, որքան մանկավարժական, քարոզչական, շինարարական և հին ձեռագրեր նորոգելու կամ ընդօրինակելու աշխատանքներով։ Վ. Բաղիշեցու նշանավոր աշակերտներից են Գրիգոր Շղթայակիրը[4], Հով. Գոլոտը, Աբրահամ Համթեցին և ուրիշները։ Պողոս Գավառացին, իր մի հիշատակարանում վերջինիս համարում է «ընտիր կարգացող և խորին փիլիսոփայ, տեղեակ հնոց և նորոց կտակարանաց, այլև արտաքնոց և նրբից և քերականութեան տեղեակ»...[5]։

Հաստատ չգիտենք, թե Վ. Բաղիշեցին երբ է դարձել Բաղեշի-Ամրդոլու վանքի առաջնորդ, սակայն, ինչպես նշեցինք վերևում, Դ. Բաղիշեցին տակավին 1663 թ. Վարդանին հիշում է որպես վարդապետ, ավելացնելով, որ «Աչատուր վարդապետի մահից հետո Ամրդոլու վանքի տեսուչ դարձավ «հոգևոր եղբայրն մեր Վարդան վարդապետ, ճարտասան և բանիբուն[6]» Այդ պաշտոնում, ինչպես ցույց են տալիս հիշատակարանները, նա մնում է բավական երկար. օրինակ 1697 թ. հիշատակարաններից մեկում Վարդանը հիշվում է Ամրդոլու վանքի տեսուչ[7]։ Ըստ երևույթին նա այդ պաշտոնին մնում է մինչև իր մահը։ Այդ ժամանակ էլ նա Ամրդոլու վանքը հիմնովին վերաշինում է և բարեկարգում։ Գրիգոր երեցը 1683 թ. մի հիշատակարանում այս մասին գրում է. «...Եւս առաւել զԱմիրդոլու վանքս ի հիմանէ շինեաց տներով և հնց[ա]ներով և արդիւնացոյց բաղում գրեանս ի սմա և միաբանս բաղումս, առաւել քան զՏաթևուն, որ է յոյժ պայծառ սաղմոսերգութեամբ և պատարագք...»[8]։

---

1 Նշանակում է վարդապետ, ունի միայն «Բառագիրք հայոց, արարեալ ի սուրբ Էջմիածին Երեմիա վարդապետէ», 1728, Կ. Պոլիս, էջ 482։

2 № 4034, էջ 223ա և բ։

3 «Գիւան հայոց պատմութեան», դիրք Ժ, էջ ԼԷ։

4 Գր. Շղթայակրի մասին կենսագրական որոշ տվյալներ պահվել են № 737 ձեռագրի դատարկ էջերից մեկում. համաձայն այդ տվյալների Գրիգորը ծնվել է 1670 թ., Մուշի որ. Կարապետի վանահայր լինում է 1704 թ., իսկ Երուսաղեմի պատրիարք՝ 1717 թ էջ 248ա և բ)։

5 № 1899, էջ 426բ։

6 Տես վերևում, էջ 362։

7 № 4034, էջ 223ա և բ։

8 № 5501, էջ 244ա։ Պողոս Գավառացին 1676 թ. հիշատակարանում՝ Վ. Բաղիշեցու առաջնորդության ժամանակ, ահա թե ինչ է գրում Ամրդոլու վանքի մասին. «...որք են թուով Խ (40) կարգացողք վարդապետ և եպիսկոպոս կուսակրօն աբեղայ և Դ (4) աշխարհի քահանայ, այլև տնտես մի և Բ (2) սպասաւոր կանայք առաջի ձեռաց նորա (Վ.

Վ. Բազիշեցին մեծ ջանասիրությամբ հին, քայքայված և ֆնասված ձեռագրերը նորոգել կամ ընդօրինակել է ավել իր աշակերտներին։ Նա նույնիսկ ուրիշ վայրերից հատուկ մարդիկ է հրավիրել և նրանց հանձնարարել նման աշխատանքներ։ Այդ մասին ծաղկող Հով. Վանեցին ահա թե ինչ է գրում. «...զաստուածարան վարդապետն Վարդան յիշեցէք... որ եղև պաճառ արուեստիս, զի բերեալ զՍահակ վարդապետն ի Վանայ ի վանս իւր և Բ (2) տարի զմեզ առ ինքն առեալ և ու[ս]ուցեալ...»[1]։ Այս առումով հետաքրքրությունից զուրկ չէ իր Վ. Բազիշեցու հիշատակարանի մի մասը, որը վերաբերում է Մուշի Առաքելոց վանքի ձեռագրերի նորոգման և ընդօրինակության աշխատանքներին «...Եւ որչափ հին ե փրտեալ գրեանք կայր ի վանքս, թէ Աւետարան, և թէ Ճաշոց, և Ցա[յ]սմաւուր, և Ճառ, և զՍարգիսագիրքն և այլ մեկնիչ և Աստուածաշունչ գրեանք եղծեալ և փտեալ. Լ (30) գիրք ե այլ աւելի տվաք նորոգել և կազմել ձեռամբ Սահակ Վանեցի վարդապետին ի թվին ՌՃԻ (1671)...»[2]։ Ուշագրավ է ֆնասված և քայքայված ձեռագրերը նորոգելու հնում եղած պատկերացումը, որը նրանց մղել է այդ աշխատանքին. Վ. Բազիշեցին միևնույն հիշատակարանում շարունակում է. «...Լ (30), Խ (40) գրոցս նորոգելն և ի հնութենէ յառաջածելն և ի փթածութենէ ի կենդանութիւն ածելն մեծ է քան զեկեղեցիս շինելն...»[3]։ XIV—XVI դարերի ընդհանուր անկմանը հաջորդած XVII դարի որոշ աշխուժացումը՝ հետաքրքրություն դեպի հին մատենագրությունը, փիլիսոփայությունը և այլն սկսվում են հենց այս աշխատանքներով։

Վ. Բազիշեցու նորոգելու և ընդօրինակելու տված ձեռագրերի մի մասը գտնվում է Մատենադարանում[4]։ Մանկավարժական և ձեռագրեր նորոգելու աշխատանքներին զուգընթաց Վ. Բազիշեցին բազմաթիվ շինարարական աշխատանքների նախաձեռնող է եղել։ Այդ մասին են վկայում ժամանա-

---

Բազիշեցու—Վ. Հ.) և Բ (2) մշակ, որք լինին Ի և Ե (45) միարան, Խ (40) կարդացող և Ե (5) անտես և մշակ։ Ինդրեմք ի բարերարէ տեառնէ.։., որ այսպիսի կարգաւորութեամբ պահեցէ զսուրբ ուխտս Ցովաննու, որ մականուանամբ Ամիրդօլու, սբ. Ցովաննէս ասի...» (№ 1899, էջ 426բ)։

[1] № 7864, էջ 324բ։ Նույն Սահակ Վանեցին 1874 թ. իր հիշատակարանում գրում է. «...եկեալ իմ ի քաղաքն Բազէշ. և ստացայ զսուրբ աւետարանս ի քահանայէն Վարդանայ տեսը միայն սեաւ գրով. և իմ ընակեալ ի վանս Ամիրդօլու առ ոտս երանաշնորհ և աստուածաբան վարդապետին Վարդանայ մի և հինգ ամիս. և ծաղկեցի վարդապետին երկու աւետարան ոսկեզօծ պատուական և գեղեցիկ յօրինուածով. և այլ բազում գրեանս ետ ծաղկել և զհնացեալ գրեանս ետ վերստին նորոգել թուով եօթանասուն և ութ գիրք...» («Գիւտ Հայոց պատմութեան», գիրք Ժ. էջ ԼԸ)։

Վ. Բազիշեցու աշակերտներից մեկը, իր ընդօրինակած ձեռագրում, այդ մասին ուշագրավ հետևյալ տողերն է թողել հիշատակարանում. «...սա բազում աշխատութեամբ և ջերմեռանդն սիրով ժողովեաց և ի լոյս էած՝ զոմանս (ձեռագրերը—Վ. Հ.) ի հեռաստանէ բազում ծախիւք բերելով և զոմանս գրել տալով գրագրաց հմուտ և արագագիր գրչաց, և զայն որ ոչ էր յայտնի շարագրով կարգեալ ի մի տփի մեծաւ աշխատութեամբ հանեալ ի գրոց հիշատակարանաց ինքն ժողովեալ հաւաքեաց զթիւս ժամուց և ժամանակայ զ[ան]յայս և զխափանեալ թիւս և զպատմութիւնս, որ ի ծուլութենէ ուսումնասիրաց և յանհոգութենէ վարդապետաց խափանեալ էր...» (№ 1896, էջ 139ա)։

[2] № 2748, էջ 358բ։

[3] № 2748, էջ 358բ։ Նման մի հետաքրքիր հիշատակարան Վ. Բազիշեցին թողել է ձեռագրերից մեկում, այդ հիշատակարանը տես ՄՏՄՑ, գործ № 72, էջ 419։

[4] № № 1896, 6434, 7864, 1899, 5501 և այլն։

կակիցների մի շարք հիշատակարանները։ Գրիգոր երեցն այդ առումով հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում. «... յիշեցէք... զքաջ բարունապետն Վարդան... զի կրկին լուսաւորիչ գտաւ Հայոց, զի բազում եկեղեցիս շինեաց ի հիմանէ և բազում մոլորեալ մարդիկ դարձոյց... յորդաբուխ քարոզութեամբն իւրով և բազում գիրս ետ գրել և զայլ հինս նորոգել զամենայն տեղեաց... Եւ յայսմ ամի (1683 թ.—Վ. Հ.) ձեռնարկեալ է յի գործս շինել անդս մեծամեծս վանիցն, որ Ոխուիք ասի, զի է յոյժ անհարթ և անհեթեթ վիմօք լցեալ. և ետ վարդապետն քարակոփացն զվէմսն հատանել և զտեղիքն գերմակ մոխրով լնուլ և որմով շուրջանակի պարսպեալ ամրացոյց գերեզմաններն և զագարակն...»[1]։ Վարդան Բալուեցին, որը Վ. Բաղիշեցու աշակերտն էր, վերջինիս հանձնարարությամբ 1680 թ. ընդօրինակելով մի ձեռագիր, հիշատակարանում գրում է. «....այժմ ընդ ամենայն տեղիս առաքելաբար շրջի, ուր և հասանէ շինէ անդ սբ. եկեղեցի...»[2]

Վ. Բաղիշեցու կենսագրության մասին տեղեկություններ են թողել իր ժամանակի խրոնիստներն ու հիշատակագիրները։ Սրանցից մեկը հաղորդում է, որ Վ. Բաղիշեցին, սերտ հարաբերություններ մեջ է եղել Երուսաղեմի հայ հոգևորականների հետ։ 1679 թ. ընդօրինակած Ավետարանի հիշատակարանից իմանում ենք, որ նա, որպես Երուսաղեմի նվիրակ, գնացել է Սպահան[3], իսկ 1684 թ. մի այլ հիշատակարան նշում է, որ նա իր աշակերտների մի մասի հետ գնացել է Երուսաղեմ «հոգևոր և մարմնաւոր եղբայրներին մխիթարելու՝ տուրքերով և ուսումով...»[4]։

Անանուն Վանեցի ժամանակագիրներից երկուսը ուշագրավ տեղեկություններ են պահել 1690 թ. Բաղեշում տեղի ունեցած եկեղեցական ներքին պայքարի մասին, որին մասնակցել է նաև Վ. Բաղիշեցին։ Այդ վկայություններից ամենից ընդարձակը գտնվում է «Մանր ժամանակագրություններ»-ի 1-ին հատորում[5], որտեղ խոսվում է նաև այդ պայքարի պատճառի մասին։ Բաղեշում գտնվող չորս վանքերը և չորս եկեղեցիները ենթարկվում էին Գոմոց վանքին, որի առաջնորդն էր «Մերունի մեծ Աւետիք վարդապետն»[6]։ 1690 թ. Գրիգոր, Մեսրոպ և Վարդան վարդապետները կաշառելով Բաղեշի Շարաֆ խանին, վերցնում են սրա համաձայնությունը և ապա գիմում Եղիազար կաթողիկոսին ու ստանում հրաման, ըստ որի «զքաղաքն չորս բաժին արարին և ամեն մեկ եկեղեցին իւր ժողովրդով մէկ վանից թէմ սահմանեցին, զի յամէն վանք մէկ վարդապետ նստիցի առաջնորդ և զիւր եկեղեցւոյ (թէմն տիրեսցէ) և զհաս և զիրաւունս ինքն առեալ զվանս իւր հոգասցէ...»[7]։

Պատմական այս իրականությունը, որը միտումնավոր կերպով մոռացության են մատնել շատ ժամանակակիցներ, որոնց թվում նաև Վ. Բաղիշեցին, հետաքրքիր է երկու նկատառումով. նախ այն ցույց է տալիս, որ

---

1 № 5501, էջ 244ա։

2 № 6434, էջ 223ա և բ։ Իր հիշատակարաններից մեկում Վ. Բաղիշեցին գրում է Մուշի Դուաքելոց վանքի (ուր նա եղել էր 1664 թ.) վերաշինման հանգամանքների մասին բավական մանրամասն (№ 2748, էջ 358ա)։

3 № 7864, էջ 324ա։

4 «Դիւան Հայոց պատմության», գիրք Ժ, էջ ԼԶ։

5 Տես ՄԺ, 1, էջ 358։

6 Նույն տեղում, էջ 358։

7 Նույն տեղում, էջ 358։

Վ. Բաղիշեցին լինելով հայ շահագործող դասակարգի ներկայացուցիչ, մասնակցել է ժողովրդից ապօրինի կերպով ստացած եկամուտների բաշխման պայքարին և իր նպատակին հասնելու համար այդ «սուրբ հայրը» չի խորշել անթույլատրելի միջոցներից. երկրորդ, ինչպես Վ. Բաղիշեցին, այնպես էլ ժամանակակից ուրիշ հիշատակագիրներ, որոնք թողել են մի շարք հիշատակարաններ, հանդիսանալով Բաղեշի վանքերի և եկեղեցիների հոգեվորականներ, դիտավորյալ լռել են այդ ներքին պայքարի մասին որևէ բան հաղորդել, ըստ երևույթին, ձգտելով մոռացության տալ պատմական իրականությունը։ Նման փաստերը ցույց են տալիս, թե ինչքան միակողմանի են եղել իշխող դասակարգերին սպասարկու պատմիչները, որոնք պատմական իրականությունն արտացոլել են՝ ելնելով իրենց դասակարգային նեղ շահերից։ Ի դեպ, այդ պայքարին ժողովուրդը բարյացակամ չէր կարող վերաբերվել, դրա պատճառով էլ ժամանակագիրը շարունակում է. «,..և այսպէս մէկ քաղաքի չորս առաջնորդ եղև... որ ոչ է բարի»[1]։

Վ. Բաղիշեցու կյանքի և գործունեության վերջին տարիների մասին այլևս բան չգիտենք, նույնիսկ Բաղեշում 1694 թ. ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում չի հիշվում նրա անունը[2], թեև ուրիշներինը գրիչը հիշում է։

Վ. Բաղիշեցու մանկավարժական, շինարարական և ձեռագրերը նորոգել և ընդօրինակել տալու գործը ժողովրդականություն է վայելել, այդ պատճառով ոչ միայն նրա աշակերտները կամ ժամանակակիցները, այլև գուսանները անմահացրել են նրան։

Ձեռագրերից մեկի դատարկ էջում գրիչ Աբրահամ Մշեցին գրի է առել գուսանների հորինած, բայց աղավաղված երգը՝ Վ. Բաղիշեցու մասին, հետևյալ խորագրով «Գովանք Վարդան վարդապետին Բաղիշեցւոյ, ասացեալ յաշըղներուց»[3]։

---

1 Տես Մժ, 1, էջ 358։

2 № 5830, էջ 229ա և բ։

3 № 737, էջ 178բ։ Բերում ենք երգի սկզբի մասը միայն.

«Գու ես քրիստոնէից զաղին,
Ներս[ն] սև է զամազին
Գիշերն եմ տեսեր յերազին,
Խորան Վարդան վարդապետին։

Խորանն ամէն լաճվարդ էր
Մէջն ամէն կին ու մարդ էր
Գրէր աւետարան և կարդեր,
Ղուրան Վարդան վարդապետին։

Անգին մարգարիտ կու թափի
Բերան Վարդան վարդապետին։

Քո շուրջ եկած տեղիքն ուր է,
Քո խոսքեր[ն] Մոր թուր է,
Քեզ ականջ չէնօղ[ն] խուլ է
Մէկիկ Վարդան վարդապետին։

Վ. Բաղիշեցին մահացել է 1704 թ.[1] Բաղեշում և թաղվել է Ամրդոլու վանքում։ Տապանագրի պատճենը գտնվում է «Դիւան»-ում[2]։

Վ. Բաղիշեցու մատենագրական գործունեությունից մեզ շատ բան հայտնի չէ։ Նրա անունով մեզ հասել է միայն մի ժամանակագրություն, որը կցված է եղել Միխ. Ասորու ժամանակագրության հիշատակարանին։ Այս բնագիրը Ղ. Փիրղալեմյանը, իր սովորության համաձայն, ընդօրինակել է կրճատումներով և առաջին անգամ մի քանի փոքրիկ հատվածներ հրատարակել «Նստարք»-ում[4]։ Այնուհետև 1900 թ. Ա. Դաղյանի ձեռագրերի ցուցակում հիշվում է սրա ժամանակագրությունը Ղ. Փիրղալեմյանի անտիպ գործերի մեջ[5]։ Ավելի ուշ Գ. Աղանյանցը Ղ. Փիրղալեմյանի կրճատումներով ընդօրինակած բնագիրը հրատարակեց «Դիւան»-ում[6], որից էլ վերահրատարակում ենք մենք։ Մ. Տեր-Մովսիսյանի ցուցակում[7] պահվել է այս ժամանակագրության մի տարբերակը։ Այս երկու տարբերակների համեմատությունը ցույց տվեց, որ Մ. Տեր-Մովսիսյանի ցուցակի տարբերակն ավելի պակասավոր է, այդ պատճառով էլ հրատարակության հիմք ընդունեցինք Գ. Աղանյանցի հրատարակությունը, իսկ մյուսի առանձին շեղումները նշեցինք ծանոթագրություններում։

Ժամանակագրության երկու տարբերակում էլ սկիզբը թերի է։ Սակայն այդ պակասը «Դիւան»-ի տարբերակում ավելի ընդարձակ է, ուստի հրատարակության բնագրում նշեցինք մյուսի ավել մասը։ Ժամանակագրության այժմյան բնագիրն սկսվում է իսլամի հիմնադիր Մահմեդի հանդես գալով և ավարտվում 1657 թ. Բաղեշում կաթոլիկ կրոնավորների և լուսավորչականների պայքարի մասին եղած որոշ տեղեկություններով։ Ժամանակագրության վկայություններից բավական հետաքրքիր են XVII դարի 50-ական թվերին Բաղեշում տեղի ունեցած առանձին եղելությունների մասին հաղորդածը։ Մնացած վկայություններն այս կամ այն ձևով դրանում ենք ժամանակագրական այլ բնագրերում։ Վ. Բաղիշեցին թե երբ է կազմել իր ժամանակագրությունը, կարելի է եզրակացնել ժամանակագրության մի վկայությունից։ Նա խոսելով սուլթան Մուհամեդ IV-ի մասին, նշում է, որ նա գահ է բարձրացել 1650 թ. և ապա ավելացնում.

«...և այս ինն ամ է, զի թագաւոր է»։ Նշանակում է Վարգանն իր ժամանակագրությունը կազմել է 1659 թվին[8] (1650+9)։ Սակայն ցավալին

---

[1] Տես Մծ, 1, էջ 363։ Բ. Կյուլեսերյանը մեջ է բերում Գ. Բաղիշեցու տապանագիրը, ուր գրված է. «Ել առ փրկչին, ի յոյս բարի,
ի ԻԳ յորելէնի,
երակ թուոյս, յաւելորդի...» («Կոլոտ Ցովհաննէս պատրիարք», Վիեննա, 1904, էջ 202), սակայն նա սխալ հաշիվներ կատարելով (տես նույն տեղում, էջ 203, ծանոթ. 1) նշում է, թե Վարգան Բաղիշեցին մահացել է 1705 թվին։ Ճիշտը 1704 թվին է։

[2] Տես գիրք ծ, էջ 81—82; Բ. Կիւլեսերեան, «Կոլոտ Ցովհաննէս պատրիարք», էջ 202։

[3] «Դիւան», գիրք ծ, էջ ԼԹ։

[4] Էջ 123, 127, 170, 187։

[5] Մասն Բ, էջ 58։ Տես նաև «Հայապատում», Ա, էջ 129։

[6] Գիրք ծ, էջ 67—80։

[7] Գործ № 72, էջ 419—421։

[8] Մուհամեդ IV-ն իրականում թագավորել է 1648 թ. և եթե սրա վրա ավելացնենք վերևում նշված 9 տարին, կստանանք 1657 թ.։ Սակայն այդ ճիշտ չէ, որովհետև հատվածի շարունակության մեջ նա գրում է, որ թուրքերի Կ. Պոլսի գրավումից հետո անցել է 206 տարի, այս հաշվով դարձյալ կստանանք 1659 (1453—206)։

այն է՝ որ հեղինակն իր ժամանակագրությունը կազմելուց (1659 թ.) հետո ապրելով 45 տարի, այն չի շարունակել մինչև իր կյանքի վերջին տարիները, որով կարող էր ավելի ուշագրավ և հետաքրքիր տեղեկությունները հաղորդել իր ժամանակի մասին։

XV

...Զոլ ի յիսկզբանց անտի ի յսկսմանէ թվականին մերոյ մինչև յայժմ զօրացեալ են և զօրանան ի վերայ մեր ազգն հա-
գարացոց, սարակինոսք և քաղրթաշուրթն ժողովու[ր]գն ըստ գրոյն վկայութեան։ Քանզի վասն մեղաց քրիստոնէից հովիւն երկնա-
5 ւոր տանջէ զապստամբ ոչխարսն ի ձեռն անօրէն գայլոց. ըստ գրոյն, թէ Նաբուգոդոնոսոր բաժակ բերկրութեան ի ձեռին իմում ու կամիմ արբուցանեմ, զոր և իսկ թոյլ ետ մեզ խնամքն վերին տիրել ի վերայ անդամոց իւրոց այլազգեացն իսմայելացւոց. զի նոքօք խրատեսցուք իբր գաւազանաւ և զխնամողն մի մո-
10 ռասցուք։

Քանզի Մահմէտն մարգն անօրէնութեան և որդին կորստեան 67
և կարապետ Նեռինն ի Յարաբիոյ ի Յաթրաբ քաղաքէ, որդի Արդլայի, ի ԿԸ (619) թուին Հայոց տիրացաւ սակաւ աշխարհի. այլ և Շամայ՝ ևս կալաւ զիշխանութիւն օգնականութեամբն
15 Հրէից. ամս Է (7) մեռանի. տուեալ հնազանդելոց իւրոց մոլար պատուէրս ի օրէնս. զոր և ինքն ունէր։ Եւ յետոյ այնք որ զնա փոխեցին [Ա]բուբաքր և Օմար, յետ սակաւու զօրացեալ՝ առեալ զԵգիպտոս և զԲարիլոն ևս, այլ և զՊարսս, և բարձին զթագաւորութիւն Պարսից. և յաղթեցին Պարսից և Յունաց, անուանե-
20 ցան թագաւորք և սուլթանք իսմայէլացւոց և Տաճկաց։ Եւ զկնի պառակտեալ ի միմեանց, եղէն սուլտանք և խալիֆայք և ամիրայք բազումք, անհնազանդ միմեանց և զմիմեամբք ելանելով։ Սակայն լցաւ՝ աշխարհն ամենայն և տուն Պարսից և Հնդկաց, և Պարթևաց և Միջերկրայք ամենայն, չար օրինօք և կրօնիւք,
25 զոր Մահմէտն ետ. զի լայն է ճանապարհ որ տանի ի կորուստ զգնացողսն, և բազումք գնան և մտանեն ի նայ ըստ անսուտ հրամանին Քրիստոսի. զի զհեշտութիւն || և զմեղս քարոզէ, որք դիւ- 68
րինք են մարմնոյ առ ի կատարել։ Եւ յետոյ կոչեցան Արդլմունիք, և զկնի սակաւու բարձեալ իշխանութիւն Տաճկաց՝ տիրե-
30 ցին Թուրքք ի յազգէն Թուրքմանաց, և յետոյ Դանիշմանիք և Մալիմանք։ Իսկ այժմ կոչին Օսմանլուք. զի յետ բազում ժամանակաց անցելոց ի թուին ՉԽ (1291) ոմն Օսման անուն ի նոյն ազգէ Թուրքաց, նովին օրինօք, ի Յասիոյ, ի Ճոխ անուն գեղջէ, շինական աղքատ. և ժամանակ ինչ թողեալ զհողագործութիւն և
35 գող եղև, և սակաւ սակաւ զօրացաւ և գնացեալ յարեցաւ ի սուլտան Ալայտինն, որ տիրէր Կապաւգոկացւոց աշխարհին, և

առևալ զօրս ի նմանէ գնաց էառ զԲուրսայ քաղաքն, որ է Եփեսոս, և առանձակ ինքնագլուխ իշխանութիւն ստացաւ, և սուլտանութիւն։ Եւ այս է Օսմանցւոց առաջին թագաւոր, զոր գիրք աստուածային օձ կոչեցին զնոսա, և այս է օսմանցի կոչման
5 պատճառն։

Իսկ յետ մեռանելոյ Օսմանի թագաւորեաց որդի նորա սուլտան Ուրանի. սա էառ զԷնգիշահարն, որ Թարգմանի նոր քաղաք, և եբարձ և ընդարձակեաց զիշխանութիւն։

Եւ յետ նորա թագաւորեաց զորդի նորա սուլթան Մուհա-
10 մատն։

Եւ յետ նորա[6] որդի նորա Մուրատ թագաւորեաց։

Եւ յետ նորա որդի իւր սուլթան || Պայազիտ, որ Իլտուլումն 69
կոչիւր, և զայս ևս իմա՝ զի զորքանն ամաց թագաւորացս ոչ կարացի գտանել. բայց զտնուանս թագաւորացս[7] որդի ի հօրէ
15 յաջորդելով։ Ի սորա ժամանակս ՊԼԳ (1384) թուին, Յոհան վարդապետն Որոտնեցին, որ մակ անուն Կանխիկ կոչիւր, վախճանեցաւ ի նոյն աւուր յորում ծնեալն էր[8]։ Եւ ի սոյն ամի Բուրհան զատին սպան զտէրն Սեբաստիոյ. և զՍահեփաննոս եպիսկոպոս նահատակեաց, և զսուրբ Փառասնից վանս քակեաց[9] զայս Պա-
20 յազիտս։ ՊԼԶ (1387) թվին Լանկ Թամուրն եկ ի Սմրզընդայ. և աւերելով և գերելով զամենայն աշխարհն մինչև ի Յանկիւրիայ, և զսա ի յերկաթի զաֆասն եդ զխոնդքար Իլտրում Պայազիտս և անդ մեռաւ[10]։

Եւ յետ նորա թագաւորեաց միւս այլ Մուրատ։

25 Եւ յետ նորա՝ միւս այլ Մուհամատ մեծ։ Ի սորա ժամանակս ՊՂ (1441) թուին այրեցին զԹրդրրշայն ի Մարզուան. և զսպիտակ գօտին բարձին ի քրիստոնէից։ Եւ ի միւս ամին ՊՂԱ (1442) սուրբ աՅ Գրիգորի մեր Լուսաւորչին դոզացեալ եզև ի Սրսայ. և տարեալ ի Հայս ի Ցէջմիածին, նորոգեցին զնա, և նոր
30 կաթողիկոս նստուցին Կիրակոս անուն. զայս Թումայ վարդապետն[11] յիշէ ի մէջ Լանկ Թամուրի պատմութեան, որ նա է շարադրեալ Թումայ վարդապետն Մեծոփեցին[12], Զսա թաղեաց Յակոբ վարդապետ Ղրիմեցին՝ հրեղէն լեզուն, որ զտումարի մեկնութիւն է արարեալ։ Այս սուլթան Մուհամատս էառ զմայրն
35 մայրաքաղաքաց, զմեծն Կոստանդնուպոլիս ի ձեռաց Հռոմոց վասն մեղաց նոցա, և այնուհետև կոչեցան աշխարհակալ և ինքնակալ կայսերք և թագաւորք, ի թուին || Հայոց ՉԲ (1453)։ Եւ 70
այսպէս բարձին զթագաւորութիւնս և զտէրութիւնս բազում ազգաց և աշխարհաց. այսինքն զՀայոց, զՎրաց, և զԱղուանից, և
40 զՄարաց և զԱսորոց, և զԱրարացւոց, ուստի էր օրինագիրն իւրեանց, և զԵդիպտացւոցն, և զՆուպեացն, և զՀոռոմոց, և զՀոնաց, և զԲուլղարաց, և զՄազքթաց, և զԱփխազաց, և զՄակեդոնացւոց, և զՀիւսիսականաց, և զԹաթարաց, և զսակաւ ինչ զՅունկաց, և զՊարսից, և ընդարձակեալ զթագաւորութիւն ինք-
45 եանք միայն տիրապետեցին[13]. բարձեալ զշինումն եկեղեցեաց, և զուրախութիւն և զպաշտօն եկեղեցականաց[14], և տրամազգեացս

արարին զամենայն ազգս քրիստոնէից. Աստուծոյ զայս մեզ հա-
տուցեալ անմիտ ազգաւ զկ[սկ]ծեցուցանել. և մեզ ոչ ինչ է փոյթ
դառնալ ի մեղաց։ Բանզի են ոմանք ի հնազանդելոց իշխանաց
մեծի թագաւորին ամիրայք ի յերկիրս Մարաց, ի յեղերս թա-
5 գաւորութեան իւրոյ սահմանաց և սահրաթաց, որ են անփո-
խադրելի տեղակալք, և սեպհական են յիշխանութեան, զի մնան
մինչ ի մահ, և յաջորդեն զնոսա որդիք իւրեանց, սակայն հար-
կատու են թագաւորին մեծի։ Իսկ ի մայրաքաղաքս ոչ այնպէս,
այլ փաշայք մեծամեծք և զօրեղք առեալ զիշխանութիւն ար-
10 ծաթավաճառութեամբ[15], ե ահարկու ձևով գան, և դողացուցանեն
զամենեսեան. սակայն փոփոխականք են, զի զկնի Զ (6) և Է (7)
ամսոյ և կամ ամի միոյ, կամ աւելի կամ պակաս անկանին ի
փառաց և յիշխանութենէ իւրեանց[16], զի հնազանդ են տէրութեան
իւրեանց, և այնպէս տևեցին մինչև ցայժմ, և այժմ 206 ամ է
15 թագաւորութիւն նոցա, յորժամ առին զՀստամպօլ։

|| Դարձեալ ՉԷ (1458) թվին շարժ եղև յերզնկայն, 32 հա- 71
զար մարդ մեռաւ, և այսչափ միայն, այլ ԺԶ (16) անգամ շարժ
եղեալ է յերզնկայն, քան զայս առաւել սաստիկ[17]։

Ի ՉԺԸ (1469) թուին սաստիկ մահտարաժամ անկաւ յաշ-
20 խարհս, և Նաղաշ վարդապետն առաջնորդ Համթայ, որ էր ի Պոռ
գեղջէն, մերձ Բաղիշոյ, զՈղբն ասաց[18]։

Իսկ ի ՉԼԱ (1482) մեռաւ սուլտան Մուհամատն, որ էառ
զՀստանպօլ, և թագաւորեաց սուլտան Պայազիտն։ Եւ շարժ եղև
յերզնկայ երեսուն հազար մարդ ներքոյ հողոյն մնաց։ Ի սորա
25 ժամանակս էր Մատթէոս վարդապետն ի Սեբաստու վանքն[19]։

Եւ ի ՉԿԲ (1513) թուին ամբարիշտն Սէլիմ ոպան զհայրն
իւր զթագաւորն զՊայազիտ, որ թագաւորեաց ամս երեսուն և
մէկ, և նստաւ ինքն թագաւոր սուլթան Սէյլիմ ամս տասներեք։
որ սահմանեաց զտղայքն ժողովել։ Եւ յետ նորա թագաւորեաց
30 Սուլայման խոնդքարն ՉՀԵ (1526) թուին[20], որ քան զամէն շատ
թագաւորեաց ամս քառասուն և շուրջ երեք զերկրաւն[21]. սա յա-
ռաջին ամի թագաւորութեան իւրոյ գնաց էառ զթաղտն Ուն-
գրուզաց, որ է Պուտունն։

ՉՀԶ[22] (1527)Տաւրիզու Հոռոմն գլուխ քաշեց, Հուսէն փա-
35 շան ի վերայ գնաց, զՀոռոմն ջարդեց և դերեցոյց[23]։

ՉՁԴ (1535) ի Շնկուռ[կ]ու գեղէն էրէց մի այրեցին[24], և ի
միւս ամին զխօջայ Կոջկան նահատակեցին ի Սեբաստ[25]։

Իսկ ի ՉՂԷ (1548) թուին Ալխասն երեկ հանցեց զխոնդ-
քարն Սուլէյման տարաւ ի Թաւրէզ ի վերայ եղբօր իւրոյ և
40 աւերեաց զԹաւրէզ. իսկ տէրն Թաւրիզոյ շահ Դահմազն՝ եկեալ || 72
աւերեաց զՄնուս, զԲասէն, զԱրզրում, զԴէրջան, զԳեղի, զԲա-
բերթ, զԵզնկայն, զԿսպեր և զայլ գաւառս և դարձաւ[26]։

Թուին ՌԶ (1557) Կեղեցի Ղուկաս վարդապետն զտումարն
ի յոտքն հանեց։

45 Եւ ի ՌԸ (1559) որդիք Սուլէյման խոնդքարին Սէյլիմն և
Պայազիան կռուեցան ի Ղոնեայ, Սէյլիմն զՊայազիան փախոյց

մինչև յԱրզրում. և անտի գնաց ի շահն[29] երեք որդովն և անդ սպանին զնա[28],

Եւ ի ՌԺԵ (1566) գնաց սուլտան Սուլէյման ի վերայ Փէ-
ջայ և անդ մեռաւ[29]։

5 Եւ ի ՌԺԶ (1567) Թուին Թագաւորեաց որդի նորա միւս այլ Սէլիմն ամս ութ[30]. Եւ ի սոյն ամի առին զԿիպրոս կղզին. զոմ, ասեն ոմանք, թէ Հրէի որդի էր, քանզի սորա հայրն անզաւակ էր, և մայր ծնաւ աղջիկ մի, և ջհուտ կին մի ծնաւ որդի արու և գանձիւք հաւանեցոյց Թագուհին զջհուտն և փոխեաց
10 զաղջիկն ընդ տղային և անուանեցին զնա Սէլիմ[31]։

Եւ ՌԻԴ (1575) Թուին մեռաւ Սէլիմն և Թագաւորեաց որդի նորա, սուլտան Մուրատն ամս քսան. Եւ ի սոյն ամի ադեր աստղն երևեցաւ[32]։

Իսկ ի ՌԼ (1581) սոյն սուլթան Մուրատն[33] զգլխոյ գօտին
15 եբարձ ի քրիստոնէից. և զդտակներ հագոյց քրիստոնէից ազգին։

Եւ ի ՌԼԴ (1585) Թուին Օսման փաշան առաւ զՇրուան, որ է Աղուանք, և զԹաւրէզ քաղաք[34], և յետ հինգ ամի Քուրտն գլուխ քաշեց եկեալ յեղնկայն, Գզիր օղլին էր գլխաւորն։

Եւ ի Թուին ՌԼԶ (1595) մեռաւ սուլթան Մուրատն և Թա-
20 գաւորեաց, որդի նորա, սուլթան Մուհամատն ամս Ժ (10)։

|| Թուին ՌԼԸ (1599) վերստին նորոգեցաւ վանքս Ամիրաոլու վերակացութեամբ Բարսեղ վարդապետին[35]։ 73

Թուին ՌԾ (1601) մեծ շահ Արաղն էառ զԹաւրէզ և զԵրեվան։

25 Եւ ի ՌԾԴ (1604) Թվին մեռաւ սուլթան Մուհամատն և Թագաւորեաց որդի նորա Ահմատն ամս ԺԴ (14)։ Եւ ի սոյն ամի եղև սով սաստիկ մինչ զի կերին մարդիկ զձի և զջորի այլ և զմիմեանս ևս։

ՌԿԴ (1615) Թվին վախճանեցաւ Բարսեղ վարդապետն Բա-
30 զիշեցին[36], որ յաշակերտաց Տաթևացւոյն ի վանքն Ամիրտօլու։

Եւ ՌԿԵ (1616) Ուռուսն էառ զՏրապիզոն։

Եւ ի ՌԿԷ (1618) աստղ երևեցաւ կեռ, որպէս թուր. և միւս այլ ագեր աստղ երևեցաւ յարևելից յարևմուտս. և միւս ամեն սաստիկ մարդամահ[37] եղև. և ի Գումաշխանէն, որ փոքր քաղաք
35 մի է՝ երեք հարիւր տուն, ի մէկ օրն հարիւր քառասուն տղայ մեռաւ։

Եւ ի ՌԿԷ (1618) մեռաւ սուլթան Ահմատն և Թագաւորեցուցին զնորին եղբայրն զՄուստաֆայն, որ եկաց երեք ամիս. և յետ երեք ամսոյ ի նոյն ամին մանղուլ արին զնա և Թագա-
40 ւորեցուցին զԱհմատի որդին զՕսման։ Որ եկաց Թագաւոր չորս ամ. և առեալ հեծեալ բազում և գնաց ի վերայ Լեհաց քաղաքին, զոր ՀօԹուն ասեն, և ոչ կարաց առնել. այլ դարձաւ ի Ստամբօլ. և ենգիչարիք չարացան և սպանին, թէ մեզ հայնց Թագաւոր պիտոյ չէ։

45 Եւ ի ՌՀԱ (1622) Թուին դարձեալ եգին զՄուստաֆան խելագար խելօք, և եկաց մի ամ և կէս. և կրկին մանղուլ արարին,

և եղին թագաւոր զՕսմանի որդին զսուլտան Մուրատն ի || ՌՀԳ (1624) թուին, հզօր զօրութեամբ և բարեսէր, որ թագաւորեաց ամս տասն և եօթն, և արար շատ քաջութիւնս, սեպտեմբեր ամսոյ 15 թագաւորեաց[38]։ Եւ սոյն ամի Կարմիր գտակներն, այսինքն Հըզըլղաշն, էառ զԲաղդատ։ Եւ յետ երկու ամի Հաւուզ Ահմատ փաշայն վազիր հղև և ՄՌ (200000) ասքարով գնաց ի վերայ Բաղդատայ և ոչ կարաց առնել զնա, կէս զօրացն Ջարգեցան և այլք փախեան եկին ի Ստամբոլ։

Եւ ի ՌՁԳ (1634) ամին թագաւորն սպան զԱպազան. և գնացեալ ի վերայ Լեհայ ի պատերազմ և հնազանդեցոյց և դարձաւ։ Եւ ի սոյն ամի ծոաղատիկն Հռոմին. և թագաւորն մեծ եասախ արար պիղծ թութունին[39]։

Իսկ ի ՌՁԴ (1635) զՀուսէն էֆէնտի Մուֆթին, և զՄանօզլին, և զԷլէզ փաշայն սպան թագաւորն[40]։ Եւ ի նոյն ամի մարտի ամսոյն ել բազում զօրք և եկն և գնաց զԵրևանու բերդն առաւ, և եհաս մինչ ի Թաւրէզ և դարձաւ. բայց Պարսիկքն ի ձմեռնային յեղանակին այլվի առին զԵրևան[41]։

Ի ՌՁԷ (1638) թուին ապրիլ 28[42] նոյն սուլթան Մուրատն գնաց ի վերայ Բաղդատու ի պատերազմ և եհաս ի Բաղդատ ի նոյն նոյեմբեր 26[43], և ծեծեաց զպարիսպն 38 օր մեծաւ զօրութեամբ և էառ զքաղաքն դեկտեմբեր 14 օր և անհամար մարդիկ մեռան։

Թվին ՌՁԸ (1639) յունիս 2, Հոգեգալստեան կիրակին, դարձաւ եմուտ յաթոռանիստ քաղաքն իւր ի Ըստամբոլ մեծաւ զօրութեամբ։ Եւ ի ՌՁԹ (1640) սուրբ Մարդոսի շաբթուն հինգշաբթին[44] մեռաւ սուլթան Մուրատն և թագաւորեաց եղբայրն իւր շունթան[45] Իբրահիմ, խելագար խելօք ամս (Ժ) (10)։

|| Եւ ի ՌՂԳ (1644) թվին տղայամահն եղև։ 75.

Ի ՌՂԹ (1650) թուին սպանին ըզշունթան Իբրահիմն և եդին զսուլթան Մահմատն, և դեռևս կենդանի է. և այս ինն ամ է, զի թագաւորէ, և սա ԺԹ (19)-երորդ թագաւոր է ի Ցօսմանէ սկսեալ, և 206 ամ է թագաւորութիւն սոցա, յորմէ հետէ առին զԿոստանդնուպոլիս[46]։

Եւ ի թուին ՌՃ (1651) Փիլիպպոս կաթողիկոսն Հայոց, լուսաւորեալ հոգին, 18 վարդապետօք և 70 կրօնաւորօք արեղայիւք գնաց ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ, յերկիրպագութիւն սուրբ տեղեացն տնօրինականաց՝ բազմամբոխ ժողովրդովք և ցնծութեամբ և ուրախութեամբ. և շինեաց զսալայարկ[47] յատակն սուրբ Յակոբայ գեղեցիկ և վայելուչ։

Եւ ի սոյն ամի օգոստոս 2, օրն չորեքշաբթի, Աստուածածնի պահոց, արեգակն խաւարեցաւ այնքան, մինչ զի աստեղք երեվեցան[48]։

Եւ արդ որովհետև ասացաւ սակաւ ինչ վասն թագաւորութեան սոցա, ոչ է պարտ տպա և զանց առնել սակս բազմազանաղէտիցն մերոց՝ զոր կրեցաք. քանզի ի ժամանակս սոյն թագաւորին Մահմետայ՝ թուին ՌՃԳ (1654), եղև. զի ի թա-

գաւորանիսա քաղաքն Ստամբոլ, ոմն պաշ[49] վազիր, և
երկրորդ էր թագաւորին, այլ և փեսայ, քանզի զքոյր սորա,
այսինքն զդուստր սուլթան Մուրատին, ունէր առ ինքն, Մալաք
Մահմատ փաշայ անուն, որ մալայիք հրեշտակ թարգմանի, ըստ
5 իւրեանց բառին, բայց ես կարծեմ թէ ի հրեշտակաց սատանայի
էր, ե կամարար նմա. զսա չարախօսեցին ոմանք առ թագաւորն,
իբր զապստամբ և զթշնամի նորա, վասնորոյ իմացեալ || թագա- 76
ւորն զնենգութիւն նորա ընկեց զնա ի պատուոյ և կամէր սպա-
նանել, բայց վասն աղաչանաց[50] քեռ թագաւորին, որ կին էր նորա,
10 պահեցաւ կենդանի, և յանէ սպանմանն, փաշայութեան ան-
ւամբն եկեալ ի Շամիրամակերտ, որ է Վան, և է մեծ փաշայու-
թիւն[51] և սանրաթ։ Եւ զի Վան փաշայութիւն է և Բաղէշ ամի-
րայութիւն և անփոխադրելի, որպէս ասացի յառաջագոյն, սա-
կայն զլխահարկն Բաղիշոյ, զոր առնէին ի քրիստոնէիցն, ի վերայ
15 Վանայ էր, քանզի ծառայք թագաւորին, որ ի Վան զքաղաքն և
զբերդն կու պահէին ի Պարսից, նոցա ոռճիկ էր տուեալ թագա-
ւորն զհարկն Բաղիշոյ։ Իսկ չար ոստիկանն մեր Աւտալ խանն՝
ընդդիմացեալ, ոչ տայր զհարկն ի ծառայքն թագաւորին, այլ
զրկէր զնոսա և ինքն ուտէր, զի բուռն էր իշխանութեամբ, և
20 հնարագէտ և ամբարտաւան, վասնորոյ յորժամ եկն Մալաք փա-
շայն ի Վան, ժողովեալ զուլեր ծառայք թագաւորին ի վերայ
նորա, և ետուն տասն հազար զուռուշ արծաթ։ զի գայցէ զօրօք
ի վերայ Բաղիշոյ և սպանցէ զամիրայն Աւտալ բէկ. իսկ նա թէ-
պէտ և ոչ կամէր, զի էր թուլամօրթ և երկչոտ, սակայն ագահեալ
25 յարծաթն և մոռացաւ զԱստուածն և ժողովեալ առ ինքն զօրս
բազումս ի ծովեզերեայց, ի Մարաց և ի Նեստորականաց, մինչ
զի եղև ԺԲՌ (12000) հեծեալ. թող զչրկիրս և զչորեսանս և զբս-
սլասաւորս. և նոքօք եկն ի վերայ քաղաքիս, և էր ժամանակն
ամառնային։ Իսկ ամիրայ Աւտալ բէկ ժողովեալ առ ինքն զզօրս
30 իւր և զդրացի ամիրայս, և արար լինել իւր զօրս ութ հազար, և
նստեալ պահէր զքաղաքն մարտնչելով ընդ նոսա, զի մի գայցեն
և աւերեսցեն զայ կամ || կողոպտեսցեն. իսկ մեղք մեր ոչ ետուն 77
նմա զօրանալ, այլ տկարանալ, զի յաւուր միում ի շաբաթի, որ
էր բարեկենդան պահոցն Վարդավառի[52], մինչդեռ կազմէին զին-
35 քեանս զի ի վաղիւն մարտիցեն. բերեալ թուղթ ինչ ի փաշայէն
ետուն յամիրայն, որ էր գրեալ այսպէս. թէ «Ընդէ՞ր քեզ դիմա-
մարտ լինիլ մեծին քո, որ չէ օրէն», կամ «Որով զօրօք կամիս
մարտնչիլ ընդ իս» կամ թէ «Զգիտցես արդեօք, զի այսքան ձեռա-
գիր ի մեծամեծաց քոց և յիշխանաց առ իս է, զի բանիւ նոցա
40 եկեալ եմ ես. և զօրն քո, յորս յուսացեալ ես, կամին սպանանել
զքեզ և կամ տալ ի ձեռս իմ, բայց դու լուր ինձ և եկ հնա-
զանդեա և ապրեսցիս»։

Իբրև ետես զայն ամիրայն սրտաբեկ և միջակոտոր եղեալ
ապշեցաւ, զի ի զօրս իւր պտրծէր, որ յապստամբել կամէին
45 յիւրմէ. վասնորոյ յակամայ կամօք ի փախուստ առեալ կամէր
զերծանել և օտար զօրքն ցրուեցան, զի նեղեալ էին ի սովոյն,

իսկ զօրքն իւր զի էին տեարք ընտանեաց և տանց, և գեօղից
և անդաստանաց, վասնորոյ յակամայս զկնի գնայեալ՝ առ ի դար-
ձուցանել աղաչանօք և երդմամբ, զի ընդ նմա իցեն մինչ ի
մահ. և հաւանեցուցեալ դարձուցին զի ի վաղիւն մարտիցեն.
5 սակայն զօրքն ամենայն ցրուեալ էին և սակաւք մնացեալ. և ի
միւս աւուր ի կիւրակէին՝ այնպէս սակաւուք գնացեալ ի կռուել,
որ եկեալ և մերձեալ էին ի քաղաքն, և մերձեալ ի միմեանս
երկոքին կողմանքն, և սկսան ի սպանումն. իբրև ետես ամիրայ
և իմացաւ զպարտութիւն իւր փախեաւ. և գնացեալ ի յամուրս
10 և ի քարանձաւս ամրացաւ հանդերձ որդովք և ընտանեօք, թո-
ղեալ զքաղաքն և զտուն իւր || ի ձեռս փաշային. իսկ զօրք փաշա- 78
յին ոչ գնացին զկնի, այլ մտին ի քաղաքն և յաւարի առին, և
կողոպտեցին զքրիստոնեայս. և աստ էր տեսանել զաղաղակ և
զողբն մեր. զի զրաղումս սպանին, այսինքն քառասուն այր
15 քրիստոնեայ սպանին. զոր և հայցեմ յԱստուծոյ, զի մասն նոցա
ընդ սրբոց Աստուծոյ լիցի և ողորմութիւն. Ընդ որս էր և Սար-
գիս անուն ոմն սարկաւագ, երիտասարդ և զօրեղ. զոր սպանին,
և սուգ մեծ եղև մեզ, զի յոյժ վայելուչ էր գեղ նորա, և ցան-
կալի բաղմաց. և ըզվանքս կողոպտեցին և զմեզ մերկացուցին,
20 բայց ողորմութիւն Աստուծոյ եհաս, զի զպահարանն մեր ոչ
գտին, ուր էաք եղեալ բազում աստուածաշունչ գրեանս, և զսպաս
եկեղեցւոյս. սպանին ի նմին աւուր և երկու եղբայրս հարա-
զատս և յոյժ ծերացեալս առ դրանն իւրեանց, որ նստեալ էին՝
զի մի ոք մնասեսցէ թալանելով, զորս սպանին երկոքին ի միա-
25 սին՝ և սգացաք յոյժ, որոց էին անունք Սահակ և Աշխան,
որոց ողորմեսցի Քրիստոս, յոյսն մեր. ամէն.

Իսկ ի միւսում աւուր գտեալ փաշայն զմին յորդոցն ամի-
բային Դիատին բէկ անուն, և եդ զնա ամիրայ. և խրատեաց զնա
չլինել իբրև զհայր իւր անհնազանդ և այնպէս թալանելով զքա-
30 ղաքդ, բազում աւարաւ դարձան ի Վան ուրախութեամբ, թալա-
նեցին և զտուն ամիրային և զինչս նորա տարան.

Եւ զկնի աւուրց եկեալ Աւտալ բէկն առ ամիրացեալ որդին
հնազանդութեան և սիրոյ պատճառաւ, և զկնի ամի միոյ նեն-
գութիւն կալեալ ի սրտի թագնաբար, չտրասէր և վատշուէրն այն,
35 որ յառաջագոյն սպանեալ էր զեղբայրն || իւր, իսկ այժմ անա-
գորոյն և քարտսիրտն այն, սպան և զամիրացեալ պարոն որդին
իւր՝ զԴիատին բէկն, և զմիւս այլ զնուրատինն և վերստին ինքն
կալաւ զիշխանութիւնն[53]. և արգել զգլխահարկն և կտրեաց ի
ղուլերացն Վանայ, և դեռ ևս ինքն ուտէ, և այս քառասուն ամ
40 է[54], զի ամիրայ է ներելո

նից և ուղղափառութեան մերում, ըստ խնոարարոյ սրտից իւրեանց՝ այժմ կրկին թափեցին զթոյնս դառնութեան իւրեանց և ժայթքեցին ի մեզ[56], զի ըստ նախանձու զոր ունէին ի վաղուց պատրաստեցին մեզ որոգայթ գաղտնի, և լարս ոտից մերոց, ե մեք ոչինչ իմացեալ էաք, քանզի այր մի գիտուն մարմնական ճարտարութեան ուրացուցին ե կուրացուցին հոգով և զրկեցին ի Քրիստոսէ. և ուրացողն Քրիստոսի պիղծն այն գնացեալ եղև սպասաւոր գրանն արքայի, մինչ զի եհաս ի բարձրագոյն վասոս, և եղև փաշայ և վազիր և երկրորդ թագաւորին, զի ճարտար էր։ Եւ ապա գնացեալ առ նա ազգն իւր նիւթեցին մեզ չարիս անտանելիս, և հրապուրեցին զնա, որ յազգէն իւրեանց թուրքացուցեալ էր, և երկրորդ էր թագաւորին, և նովաւ հանդերձ մտին առ թագաւորն սուլտան Մահմէտ, և ետուն երկու հարիւր հազար ղուրուշ, այսինքն հարիւր հազար || գահեկան կարմիր, և աղաչեցին զթագաւորն, զի տացէ նոցա զեկեղեցին Հայոց, զվանս սրբոյն Յակորայ, ուր է գլուխն Յակորայ առաքելոյն Զերեգեայ՝ որ էր ի ձեռս մեր. և էր վանք մեծ հոյակապ և սքանչելի[56] և ականաւոր և անմման, և այնպէս հնարիւք կաշառեցին զթագաւորն, և առին ի մէնջ զսուրբ Յակոր և բարձին ղուրախութիւն մեր և զպաշտօն, և ահա եղաք հաւասար հողոյն և այլ նուազագոյն. և բարձաւ թագաւորութիւն մեր հոգևոր, և ոչ կամիմք տեսանել զմեզ կենդանիս, քանզի լաւ է մեզ մեռանել քան զայս կեանս մեր. և խաւարեցաք և մթացաք և ի ձեռն այս աղէտի զրկեցաք և ի գերեզմանէն Քրիստոսի և ի տեսութենէ նորա. և այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց. զի թէ մեղքն մեր ոչ էր պատճառ, ահա զի բազում անգամ յարուցեալ ի վերայ մեր վասն սոյն խնդրոյ և ոչ կարացին առնուլ. և այժմ մատնեաց զմեզ տէր յանարգութիւն և ի ստրկութիւն և ի սուգ անմխիթար վասն չարեաց մերոց և անզեղջ կամաց, սակայն ոչ եմք յուսահատեալ. եթէ եթող տէր զմեզ ի ձեռաց, այլ ակն ունիմք ի Քրիստոսէ. զի մաղթանօք սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց և սրբոյն Յակորայ առաքելոյն, զի հաշտեսցի ընդ մեզ գթաց տէրն, և դարձուսցէ ի մեզ զվայելուչ և զադինասարաս եկեղեցին և զվանքն մեր, զի մի կորիցուք իսպառ. զի ոչ իսպառ բարկանայ մեզ տէր և ոչ յաւիտեան պահէ ոխս. որև նոյն անյիշաչար տէրն ողորմեսցի մեզ ե գթասցի ի մեզ, զի մի երբեք յուսահատեսցուք. ամէն[57]։

80

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մ. Տեր Մովսիսյանի ցուցակում ժամանակագրության բնագիրը թեև սկզբից թերի է, սակայն սրա մի ընդարձակ հատված բացակայում է «Դիւան»-ում հրատարակված բնագրից։ Վերևում բերված է այդ ամբողջ հատվածը։

2. ՄՄՄ-ի տարբերակում «զամաց» ձևով։

3. Նույն տեղում «լցաւ» բառը չկա։

4. Նույն տեղում «յայնմ» ձևով։

5. Նույն տեղում «Զիմ»-ի փոխարեն «Զի»։

6. Բնագրի «և այս է Օսմանցւոց առաջին թագաւոր... Եւ յետ նորա» հատվածը նույն տեղում բացակայում է։

7. Բնագրի «ոչ կարացի գտանել, բայց զանուանս թագաւորացս» հատվածը նույն տեղում չենք գտնում։

8. Տես և հմմտ. Թ. Մեծոփեցի, էջ 16։

9. ՄՄՄ-ի տարբերակում «փակեաց» ձևով։

10. Տես և հմմտ. վերևում, էջ 381։

11. ՄՄՄ-ի տարբերակում «Թումայ վարդապետն Մեծոփեցին» ձևով։ Այս տեղեկությունները Թ. Մեծոփեցին հաղորդում է ոչ թե իր պատմության մեջ, այլ հիշատակարանում։ Մատենադարանի № 1899 ձեռագիրը, որը պատմական նյութերի ժողովածու է, ընդօրինակվել է 1676 թ. Բաղեշում, Գողոս Դավառցու կողմից, Վարդան Բաղիշեցու պատվերով։ Այս ձեռագրում ի թիվս այլ պատմիչների երկերի, գտնվում է Թ. Մեծոփեցու պատմությունը, իսկ պատմության անմիջական շարունակությունը (ձեռագրի 427-րդ ա էջ) կազմում է միևնույն հեղինակի այն աշխատությունը, որը հայագետ Կ. Կոստանյանցը հրատարակեց՝ Թ. Մեծոփեցու հիշատակարան անունով (նույն բանը տես նաև № 2748 ձեռագրում, որին լեռ ծանոթ էր Վարդան Բաղիշեցին)։ Ամենայն հավանականությամբ, այս վկայությունը Վ. Բաղիշեցին վերցրել է իր պատվեր տված ձեռագրից (№ 1899), «հիշատակարանը» համարելով Թ. Մեծոփեցու պատմության շարունակությունը։

12. Բնագրի «յիշէ ի մէջ... վարդապետն Մեծոփեցին» ՄՄՄ-ի տարբերակում բացակայում է։

13. ՄՄՄ-ի տարբերակում «միապետեցին» ձևով։

14. Նույն տեղում, «և զուրախութիւն և զպաշտօն եկեղեցականաց» հատվածը պակասում է։

15. Նույն տեղում «առեալ զիշխանութիւն ի թագաւորէն արծաթավաճառութեամբ» ձևով։

16. Նման մի վկայություն առավել մանրամասն տես ներքևում, էջ 797։

17. Տե՛ս և հմմտ. վերևում, էջ 284։

18. Տե՛ս և հմմտ. ՄԺ, 1, էջ 168, 176, ծանոթ. 17։

19. Մատթեոս Սեբաստացու մասին որոշ մանրամասնություններ հաղորդում է Հ. Սեբաստացին, որին նա համարում է «այր բանիբուն և գիտնական, որ անուն և համբաւ հուչակեալ և տարածեալ էր ի մէջ ազգիս» («Դիւան հայոց պատմութեանց», գիրք Ժ, էջ 893)։ Այն ցուցումը, թե սրա մասին հիշում է Առաքել պատմագիրը (նույն տեղում, էջ 393), նման բան Ա. Դավրիժեցու Պատմության մեջ չգտանք։ Անանուն Սեբաստացի ժամանակագիրը Մատթեոս Սեբաստացուն կոչում է նաև Բոսաէլիմեի (տես ՄԺ, 1, էջ 169)։

20. Իրականում Սուլեյման I-ը իշխել է 1520—1566 թթ.։

21. Իմա, Ասիա, Աֆրիկա, Եվրոպա։

22. ՄՏՄՑ-ի տարբերակում «ՉՉ» ձևով, այս թերևս մեքենագրական սխալ լինի

23. Տես և հմմտ. վերևում, էջ 355, Մծ, 1, էջ 169։

24. Այս դեպքը ՄՏՄՑ-ի տարբերակում դրված է հայոց «ՉՉԳ» թվականի ներքո։

25. Նույն տեղում այս անունը «կխօջայ Օղլան» ձևով։

26. Տե՛ս և հմմտ. վերևում, էջ 206—207։

27. ՄՏՄՑ-ի տարբերակում «ՇաՄՆ» ձևով։

28. Տե՛ս և հմմտ. վերևում, էջ 207։

29. Տե՛ս և հմմտ. նույն տեղում, էջ 267։

30. ՄՏՄՑ-ի տարբերակում «ամս Բ» (2)։

31. Տե՛ս և հմմտ., Մծ, 1, էջ 167։

32. Բնագրի «ամս քսան..... ասողն երեցաւ» հատվածն ՄՏՄՑ-ի տարբերակում բացակայում է։

33. Այս տողն սկզբից մինչև «Մուրատն» ՄՏՄՑ-ի տարբերակում չենք գտնում։

34. Տես և հմմտ. վերևում, էջ 245։

35. Այս վկայությունը պակասում է ՄՏՄՑ-ի տարբերակում։

36. Ա. Դավրիժեցին սրան կոչում է Դավառացի, մանրամասն տես էջ 391—394, 401—441։ Ըստ որի Բարսեղը մեծ սեր է ունեցել դեպի արտաքին գիտությունները, և, ինչպես Ս. Դավրիժեցին է գրում, «պատճառ եղև գտանելոյ արտաքին դրոց գիտութեանն» (էջ 394)։ Բարսեղն ունեցել է բազմաթիւ աշակերտներ, որոնց մեջ նշանավոր են Ներսես Բեղլուն, Հովսեփ Օղմերին և ուրիշները. Նորոգել է Բաղեշի Ամրոցու վանքը, որտեղ էլ գտնվում է նրա դերեզմանը։

37. Բնագրի «և միւս այլ...և միւս ամեն սաստիկ մարդաց» հատվածը ՄՏՄՑ-ի տարբերակում բացակայում է։

38. ՄՏՄՑ-ի տարբերակում նշված է սեպտեմբերի «ԺԹ» (19)։

39. 1635 թ. մի հիշատակարանում այս մասին կարդում ենք. «...խիստ է և բարկասիրտ թագաւոր (խոսքը Մուրադ IV-ի մասին է—Վ. Հ.).....դի հուքմ և հրամանն կատարեալ է, որ զայն նոր ելեալ շար մուխն, որ ասի թուքուն և դև ջրի ըմպելոյ տեղն աւերեց. և սաստիկ է հրամանն, որ թէ մէկ մի գտնու, որ մուխ կամ սև ջուր ըմպէն ազատելոյ չէ, այլ զանազան տանջանաւք սպանանէն...» (ՄՏՄՑ, գործ № 32, էջ 253)։ Տե՛ս վերևում, էջ 270։

40. Տես և հմմտ. Ա. Դավրիժեցի, էջ 642։

41. Այս վկայությունները հավաստում է Ա. Դավրիժեցին (տես էջ 316—317), հմմտ Մծ, 1, էջ 196։ Թեև ուրիշները նշում են 1635 թ. ամառը, օրինակ, ժամանակակից մի գրիչ գրում է, որ Մուրադ IV-ի բանակը կարին հասավ հունիսի 28-ին Վարդավառի բաբիկենդանին և ապա «ելեալ գնաց պատերազմ ի Պարսս և ի Այրարատեան քաղաքն, որ է Երևան, ընդդիմացան և ի խսար մտին և նա պաշարեալ նստաւ ի վերայ և ոչ դիտեմք զվերջքն...» Երուսաղեմի № 1127 ձեռագրի հիշատակարանից, որը վերցրել ենք ՄՏՄՑ-ի № 32 գործից, էջ 253)։ Սակայն Հակոբ Կարնեցու համաձայն Թուրքերը Կարին հասել են Վարդավառին՝ հուլիսի 5-ին (Մծ, 1, էջ 242, սրբազրական սխալի հետևանքով վերջինում նշված է հունիսի 15-ին, Մծ, 1, էջ 250, ծանոթ. 16)։

42. ՄՏՄՑ-ի տարբերակում «ապրիլի 28»-ի փոխարեն «ապրիլ 8»-ը։

43. Նույն տեղում «նոյեմբեր 26»-ի փոխարեն «նոյեմբեր 4»։ Վերջինս ավելի հավանական է։

44. Այսինքն 1640 թ. փետրվարի 5-ին։

45. Երկու տեղ այդպես, մինչդեռ ՄՏՄՑ-ի տարբերակում երկու դեպքում էլ «սուլթան» ձևով։

46. Այս ամբողջ վկայությունը ՄՏՄՑ-ի տարբերակում դրված է 1651 թվականի վկայությունից հետո։

47. ՄՏՄՑ-ի տարբերակում «զսալարատակ» ձևով։

48. Տես և հմմտ. վերևում, էջ 361։ Այս վկայությունն ստույգ չէ, որովհետև աստղաբաշխական տվյալներով արևն օգոստոսի 2-ին խավարել է 1655 թվին։ Բացի այդ, 1651 թիվը օգոստոսի 2-ը շաբաթ է, իսկ այդ միևնույն տարվա Աստվածածնի պահը կընկնի օգոստոսի 2-ից հետո՝ 11-ից մինչև 16-ը ներառյալ։

49. Ժամանակագրության Դ. Աղանյանցի հրատարակության բնագրում այս բառը գրված է որպես հատուկ անուն՝ «Գաշ» ձևով, իսկ ՄՏՄՑ-ի տարբերակում՝ «պաշա» ձևով

50. ՄՏՄԾ-ի տարբերակում «աղջկան» ձևով, որը, սակայն, սխալ է։

51. Նույն տեղում բացակայում է «որ է Վան, և է մեծ փաշայութիւն» հատվածը։

52. Այսինքն 1655 թ. հուլիսի 15-ից մինչև 21-ի օրերից մեկում։

53. Մալաք փաշայի և Ավդալ բեկի կոիվների մասին, համեմատաբար համառոտ պատմում է նաև Դ. Բաղիշեցին (տես վերևում, էջ 361)։ Մի շարք տեղերում այս երկու բնաղրերը շեղվում են իրարից։ Տարբեր է նույնիսկ տարեթիվը։

54. Այդ նույն բանը Վարդան Բաղիշեցին հաղորդում է Մխ. Ասորու ժամանակագրության հայերեն բնաղրի նորոգման հիշատակարանում, այնտեղ կարդում ենք. «Այլ և տեղո[յ]ս պարոնութեան Աւդալ բէկին, որ սպան զեղբարսն և զորդիսն իւր անհաւատն այն և տեսաց զքառասուն ամ իշխանութիւն, ներելով տեառն և զեռ տակաւին է մինչև բարձի...» (ՄՏՄԾ, ձեռ. № 72, էջ 419)։

55. ՄՏՄԾ-ի տարբերակում «և ժայթքեցին ի մեղ» հատվածի փոխարեն «ի հայ եկեղեցիս ի մեղ» ձևով։

56. Նույն տեղում այս բառի փոխարեն «հոչակելի»։

57. Բնաղրում սրանից հետո սկսվում է Վարդան Բաղիշեցու հիշատակարանը. «Աղաչեմ յիշել ի տէր Քրիստոս յոյսն իմ, զմեղուցեալ բանի սպասաւորս Վարդան և զծնողսն իմ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, որ զդիրքս կազմեցի վերստին, և զյիշատակարանս և զսակաւ պատմութիւնս արարի, տկար մտօք, ոչ որպէս ձեզ վայել է, այլ ըստ իմում չափոյ, և զուք յիշեսջիք ի Քրիստոսէ նաև զհամշիրակ եղբայրդ իմ զՏիզբանակերտցի Սարգիս բարուն ի յետ յիշեցէք. ամէն»։ («Դիւան», դիրք Ծ, էջ 80—81)։